

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

28.06.2006թ.

ժ. 11.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Վ. Դանիելյան, Հ. Պետրոսյան, Գ. Գևորգյան, Վ. Դավթյան, Յու. Պողոսյան (*խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝

Լ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ*), Ջ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդակցական*), Ա. Ավագյան (*Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Բ. Մարտիրոսովա (*Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ*), Ա. Ավագյան (*Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ*), Ա. Սաֆյան (*Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ*), Ա. Կարապետյան (*Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ*)

Օրակարգի նախագծում` չորս հարց.

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 01.04.2004թ.-31.03.2005թ. և 2005թ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազաները Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը տրամադրելու մասին.

/Ձեկուցող` Գ. Մարտիրոսովա/

2. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 77 արձանագրային որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին

/Ձեկուցող` Գ. Գյուրջյան/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1 Հաշվետվություն «Գենդերային վիճակագրությունը գյուղատնտեսության ոլորտում փոփոխությունների և զարգացումների վերլուծության համար» խորագրով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու մասին,

/Ձեկուցող` Ա. Ավագյան, Ա. Կարապետյան/

3.2 Հաշվետվություն Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի 54-րդ լիակազմ նստաշրջանին մասնակցության վերաբերյալ.

/Ձեկուցող` Ս. Մնացականյան, Ա. Սաֆյան/

3.3 Հաշվետվություն ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի /ԵՏՀ/ Շրջակա միջավայրի մոնիտորինգի և գնահատման Աշխատանքային խմբի վեցերորդ սեսիային մասնակցության վերաբերյալ.

/Ձեկուցող` Յու. Պողոսյան/

4. Այլ հարցեր

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Զվեարկության արդյունքները- կողմ` 6, դեմ` 0, ձեռնպահ` 0/

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 01.04.2004թ.-31.03.2005թ. և 2005թ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված

անվանագերծված տվյալների բազաները Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը տրամադրելու մասին.

/Չեկուցող՝ Գ. Մարտիրոսովա/

Որոշեցին՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 01.04.2004թ.-31.03.2005թ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան հետևյալ՝ տրամադրվող անվանագերծված տեղեկատվությունը զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական /

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 77 արձանագրային որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին

/Չեկուցող՝ Գ. Գյուրջյան/

Որոշեցին՝

Հիմք ընդունելով «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասերը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի աշխատակարգի» 1.3. կետի 3-րդ պարբերության 2-րդ ենթակետով, ինչպես նաև հաշվի առնելով Գործարարության աջակցման խորհրդի 31.05.2006թ. նիստի N66-77(1) արձանագրության 13-րդ կետի «բ» ենթակետը, Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը որոշում է.

ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 2-ի «ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Ձև թիվ 1-բավ վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և լրացման հրահանգին հավանություն տալու մասին» թիվ 77 արձանագրային որոշումը:

/Արձանագրային/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1 Հաշվետվություն «Գենդերային վիճակագրությունը գյուղատնտեսության ոլորտում փոփոխությունների և զարգացումների վերլուծության համար» խորագրով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու մասին,

/Չեկուցող՝ Ա. Ավագյան, Ա. Կարապետյան/

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն «Գենդերային վիճակագրությունը գյուղատնտեսության ոլորտում փոփոխությունների և զարգացումների վերլուծության համար» խորագրով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:

/Արձանագրային/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3.2 Հաշվետվություն Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի 54-րդ լիակազմ նստաշրջանին մասնակցության վերաբերյալ.

/Չեկուցող՝ Ս. Մնացականյան, Ա. Սաֆյան/

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի 54-րդ լիակազմ նստաշրջանին մասնակցության վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:

/Արձանագրային/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3.3 Հաշվետվություն ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի /ԵՏՀ/ Շրջակա միջավայրի մոնիտորինգի և գնահատման Աշխատանքային խմբի վեցերորդ սեսիային մասնակցության վերաբերյալ.

/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի /ԵՏՀ/ Շրջակա միջավայրի մոնիտորինգի և գնահատման Աշխատանքային խմբի վեցերորդ սեսիային մասնակցության վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:

/Արձանագրային/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան